



Երկուշաբթի, 11 Մայիս, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 127

ԱՍՏՈՒԾՈՑ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՎՍՏԱՀԷ

Եթէ Տէրը ինք չշինէ քունը,
գուր քեղ կը յոգնին գայն շինողները.
Եթէ Տէրը ինք չպահպանէ քաղաքը,
գուր քեղ կը հսկեն պահապանները:
Առանց Տիրոջ՝ գուր քեղ է որ կանուխ կ'արթննաք
եւ գիշերը ուշ հանգիստի կ'անցնիք՝
քառապանքով հաց մը ուրելու համար.
Տէրը ինքն է որ քուն կը պարգեւէ իր սիրած մարդուն:
Տէրը իբրեւ ժառանգութիւն՝ որդիներ կու տայ,
իբրեւ վարձատրութիւն՝ զաւակներ կը պարգեւէ:
Երիտասարդ տարիքին ունեցած զաւակները
կը նմանին ռազմիկի մը ձեռքին մէջ գտնուող նետերուն:
Երանի՛ այն մարդուն, որուն կապարճը անոնցմով լեցուն է.
անիկա ամօթով չի մնար՝
երբ իր թշնամիներուն դիմաց կեանքնի դադարաստանի մէջ:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐԹ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեաց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

37-38 ԳԼՈՒԽ

ՍԵՂԵԿԻԱՅԻՆ ԽՆԴՐԱՆՔԸ ԵՐԵՄԻԱՅԻՆ (37:1-10)

Սեղեկիա 21 փարեկան էր, երբ թագաւոր եղաւ ու Երուսաղէմի մէջ 11 փարի թագաւորեց: Անիկա Տիրոջ առջեւ չարութիւն ըրաւ (Դ Թագ 24:18-20): Բայց անոնք «**Տիրոջ Երեմիա մարգարէին միջոցով ըսած խօսքերուն մփիկ չորին**» (2 հմբ): Նաբուգոթոնոսոր զինք թագաւոր նշանակեց: Հակառակ այն իրողութեան, որ Սեղեկիա խոստացած էր հաւաքարիմ ըլլալու Նաբուգոթոնոսորին, բայց ընդհակառակը, դաշնակից էր Եգիպտոսի հետ, կարծելով թէ Եգիպտացիները պիտի օգնեն: Ահա այդ անորոշ ու սարսափահար վիճակին մէջ Երեմիայի մօտ մարդ կ'ուղարկէ, որպէսզի «**Շնորհք ըրէ, մեզի համար մեր Տէր Աստուծոյն աղօթք ըրէ**» (3 հմբ):

Տիրոջ պատասխանը կ'ըլլայ ըսելով. «**Ահա ձեզի օգնութեան համար եկող Փարաւոնին զօրքը իր երկիրը՝ Եգիպտոս պիտի դառնայ, ու Քաղղէացիները այս քաղաքին դէմ պատերազմ պիտի ընեն ու զանիկա պիտի առնեն ու կրակով այրեն**» (8 հմբ): Այն բանակը որ խոստացած էր գալու օգնութեան, եր պիտի վերադառնայ:

Ուստի «**Մի՛ խաբէք ձեր անձերը**» (9 հմբ), ըսելով Եգիպտացիները պիտի գան օգնութեան: Քաղղէացիները պիտի հեռանան: Տէրը կը վստահեցնէ, որ օգնութեան մէկը պիտի չգայ, իսկ Քաղղէացիները, նոյնիսկ եթէ վիրաւորուած մարդիկ մնան, այս քաղաքը կրակով պիտի այրեն: Որովհետեւ եթէ Աստուած մեր թշնամին, ալ ինչպիսի ուժ կրնայ Անոր դէմ դնել, իսկ հակառակն ալ Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Եթէ Աստուած մեր կողմն է, ով կրնայ մեզի հակառակ ըլլալ»:

ԵՐԵՄԻԱՆ ԿԸ ՁԵՐԲԱԿԱՎՈՒԻ ՈՒ ԿԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԻ (37:11-21)

Երեմիայի փուած մարգարէութիւններն ու պարգամները շար հաճելի չէին, որուն իբրեւ հետեւանքը ահա Երեմիա կը ձեռքակալուի եւ կը բանտարկուի: Այդ միջոցին թագաւորը գաղտնաբար կ'այցելէ Երեմիային հարցնելու համար եթէ երբեք պարգամ մը կայ Տիրոջ կողմէ, Երեմիան ալ կը պատասխանէ. «**Կայ: Դուն Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի փրուիս**» (17 հմբ): Որեւէ յոյս կա՛յ: Բայց Երեմիա մարգարէին պատասխանը այն չէր ինչ որ թագաւորը կը սպասէր: Միւս կողմէ, Երեմիայի կեանքը եւ ազատութիւնը Սեղեկիա թագաւորին ձեռքն է առ այժմ, գոնէ լաւ բաներ ըսէ, որպէսզի ազատ արձակուի: Բայց, ընդհակառակը, Երեմիա Աստուծոյ մարգարէն է եւ ինչ որ Աստուծոյ պարգամն է փոխանցելիք այդ է որ կը փոխանցէ: Ան նաեւ հաւաքարիմ է Աստուծոյ ու կը մնայ այդպիսին, անոր համար ալ Երեմիա իր ողորմութիւնը Աստուծմէ կը սպասէ եւ ոչ թէ մարդոցմէ: Նոյնն է միւս բոլոր մարգարէներու պարագային, որոնք յանձն առին նահապակութիւն, մահ, պայմանաւ հաւաքարիմ մնալու Աստուծոյ եւ ըստ այնմ պարգամները փոխանցելու: Առաւել եւս Երեմիա մարգարէն կը յիշեցնէ թագաւորին ըսելով. «**Ո՛ր եմ այն մարգարէները, որոնք սուր բաներ մարգարէացան**» (19 հմբ):

ԵՐԵՄԻԱՆ ԶՈՐ ԶՐՀՈՐԻ ՄԸ ՄԷՉ (38:1-13)

Սեղեկիա թագաւորի գլխաւոր խորհրդականներէն չորսը, երբ լսեցին Երեմիայի պարգամները անմիջապէս ուզեցին որ ան մեռնի, որովհետեւ անոր պարգամները ահաւոր են, ժողովուրդին համար չարիք են եւ ոչ թէ խաղաղութիւն: Բայց այս պարգամները Երեմիա մարգարէին պարգամները չեն, այլ Աստուծոյ ճշմարիտ պարգամներն են: Միւս կողմէ զարմանալի ու անընդունելի պարգամներ են որ կու փայ Երեմիան, «**Քաղղէացիներուն հետ ելլողը ողջ պիտի մնայ ու պիտի ապրի, այլապէս սուրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնի**» (2-3 հմբ): Իշխանները կ'ուզեն որ Երեմիա մարգարէն մեռնի, որովհետեւ իր պարգամները չեն քաջալերեր, ընդհակառակը առաւել եւս կը յուսահարեցնեն պատերազմիկները, ու անոնց ձեռքերը կը թուլացնեն:

Սեղեկիա գիտնալով, որ Երեմիան ճշմարիտ մարգարէ է, որուն քով գալով խնդրեց որ եթէ Աստուծմէ պարգամ ունի կամ ոչ, բայց ան փկար էր նկարագրով: Երբ իշխանները Երեմիայի մահը կ'ուզեն, Սեղեկիա կ'ըսէ. «**Անիկա ձեր ձեռքն է, որովհետեւ թագաւորը ձեզի հակառակ բան մը չի կրնար ընել**» (5 հմբ): Ահա Երեմիա մարգարէն գուրը նետեցին, որուն մէջ ջուր չկար, հապա միայն փիղմ, որուն մէջ կ'ընկղմէր:

Ահա Եթովպիացի ներքինին, որ Սեդեկիայի պալատին մէջ էր, կը խնդրէ թագաւորէն որ Երեմիան այդ գուբէն դուրս բերեն: Երեւակայեցէք, օտարական մը ինչպիսի քաջութեամբ կը խնդրէ թագաւորէն որ Երեմիան դուրս բերուի գուբէն, ու մանաւանդ՝ քաջութեամբ կ'արտայայտուի ըսելու համար, թէ «**այս մարդիկը սխալ ըրին Երեմիան գուբը ներելով**» (9 հմբ): Եթովպիացի ներքինին՝ Աբդեմեկէքը, որուն ներսիդին Աստուած գութ դրաւ Երեմիայի նկատմամբ, որ յետոյ անոր դիմաց Տէրը պիտի ողորմի իրեն (39:15-16): Այս բոլորը ցոյց կու տան Աստուծոյ գործելակերպը, որ Ան երբեք չի մոռնար իրեննիները: Այո, անոնք կրնան նեղութիւններէ անցնիլ, բանտարկուիլ, անարգուիլ, ծեծուիլ, մինչեւ իսկ սպաննուիլ: Բայց եթէ փակաւին ընելիք ունին, Տէրը գիտէ ինչպէս ազատագրէ զանոնք: Յիշենք Յովսէփի պարագան:

ՍԵԴԵԿԻԱՆ ԵՐԵՄԻԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԿԸ ԴԻՍԷ (38:14-28)

Ահա Սեդեկիա Երեմիային կը հարցնէ թէ ինչ պիտի պատահի զալիքին: Երեմիան ալ կը պատասխանէ ինչ որ կը ստանայ Աստուծմէ: Աստուած նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան, կը նշանակէ թէ Իր պատգամներն ալ նոյնն են: Ահա Երեմիա մարգարէն կը քաջալերէ թագաւորին որ մտիկ ընէ Աստուծոյ պատգամները, յանկարծ չըլլայ թէ վախը պատճառ դառնայ, որ մտիկ չընէ Աստուծոյ պատգամին: Ինչպիսի ահաւոր վախի վիճակի մէջ է թագաւորը, որ կը խնդրէ Երեմիա մարգարէէն որ իրենց այս խօսակցութիւնը գաղտնի մնայ մարդ չիմանայ: